



13 (168). ԸՆՏԱՎՈՐՆԵՐ

Գելն ու աղվեսն ու դեվեն զխոսքեր ուրանց էրին մեկ, օր էր-
թան Յերուսաղեմ, էղնին մուխսի: Դեվի անուն դրին Բագոս, գիլուն՝
Մարկոս, աղվըսուն լե՝ Թևաթորոս: Յրնկան ճամպա, գացին, շատ
գացին, թե քիչ, անոթցան: Աղվեսն ու գել խորուրգք էրին մըջ ու-
րանց, թե իմալ էնին օր զգեվեն ուտին:

Աղվեսն ըսեց.

— Ախպըրտի՛ք, մենք Յերուսաղեմ կէրթանք, հմա Յերուսա-
ղեմ էրթալ հմալ խողայի բան չէ, անուն փոխելով մարդ մուխսի չը
դառնա: Դուք դինաք, օր ախշար մեղաց տուն է, մեծորեք ըսած ին՝
«Մառ չկա, օր քամի շառնե», արեք մեկ-էրկու օր ծոմ ու պաս
սլահինք, դմեր մեղքեր խոսինք-խոստովանինք, տեսնանք մեր մէջ
ո՞ն է արդար, ո՞ն է մեղավոր: Ֆարդ էնինք՝ ես մեղավոր-մեղա-
սլարտ դուս էկա, խո ես չը՛մ կռնա էրթա Յերուսաղեմ, կը մնամ
չողա, կես ճամպուն: Գել ախպեր, չառեշ դու զքու մեղք ըսե:

Գելն ըսեց.

— Ախպըրտի՛ք, ձրզնե պահիմ, աստծո՞ւց ինչ պահիմ. ձրգերս
օրերով անոթի կը մնեն, կսկըծու աչքերս կը մթնդեր, սիրտսի կտոր-
կտոր կէղներ, շարես կը կտրեր, կէրթենք սար՝ հովվից օխշար մե,
դառ մե, յան ուլ մե կը փախցուցենք, կը բերենք դիմ ճժկըներ կը
կերակլենք: Ըշտե իդա՛ ՛ի իմ մեղք:

— Աստված թողութե՞ն շնորեացե, — ըսեց աղվես, — քու կամ-
քով զէդ բան չըս էրերի՛. «Հարկ զօր՛ն լուծանէ», օր քու ձրգեր
անոթի չը մնեն, դու զէդ բան կէնե՞ր: Ախպըրտի՛ք, ես լե է՛ն հալու

մեջ ենք, ինչ օր գել ախպեր, ձրգերսի անսվաղ կը մննն, կը մտնենք
հավնոցներ, հավ-ձագ մե, յա մառաննն փշուր մե ժաժիկ կը տանենք
ճժերուն՝ ալզականոք կուտեն, մեռնելուց կաղատվեն:

— Աստված թողութե՛ն շնորեսցե, — ըսեց դել. — ըդի ըսկի լ՛:
մեղք չէ, ժաժիկն ի՛նչ է, օր աստված մեղք համարե:

Գեվեն ըսեց.

— Ախպերտի՛ք, իմ տերն օր զիսի կը բառնեք, քշե՛ հա՛ քշե՛,
դուր ու դագար չըր իդե, չը թողեր կտոր մե բան ուտենք, չարես կը
կտրեր կը մտնենք արտերու խրաղներ ափնարոտիկ կէնենք, թել
մե խոտ, յան կտոր մե փուշ կը պրծուցենք, կուտենք, էն լե իմ տեր
հարամ-դարամ կէնեք վրես:

— Վա՛յ, քու տուն չը քանդվի, վա՛յ, — պրըթաց աղվես, — տե-
սար դու ղմե՛ղք, ըդըրնն լե ծանդր մեղք կա՛ մըջ ախշըրքին: Իդա
քու տալաասյան յոտներով զխեղճ որնջբըրի արտեր յոտաց տակ
առիր իս, տրորեր իս, զը՛նդրա ճժերու խամաթ լե կտրեր իս... Քու
մեղք ծանդր է ու վտա՛նդ մեղք, քըդի քավութենն ու փրկութենն չկա.
դու արժընիկ չիս Յերուսաղեմ գալու:

Գեվն ըսեց.

— Ընձի մնա՛ ախպեր դեվեն կը դառնա յետ:

— Հի՛, էրթա յընդնա շուն ու ջանավարի գրտա՛վ, — կըսե աղ-
վես, — աղելն էն չէ՛, օր մորթինք ուտինք, ըխտավոր ինք, ուր հո-
գուն լե վարձք է:

— Հա՛ա՛:

— Հա՛:

— Օր հմալ է, գել ախպեր, դու ղդեվեն մորթե, քերթե, հարի
էրթամ իգա դիմացի աղհանք աղ բերիմ, օր չէղնի միսն առանց աղի
ուտինք, ալնի միս ղփոր կը ցավցու:

Աղվեսն օր կէրթա աղի, դեվեն ծանդր «ա՛խ» կը քաշե:

— Ախպեր ջան, յորի՛ն հմլա ծանդր «ա՛խ» քաշեցիր, — կը
հարցու գել:

— Ըպա ի՛մալ «ա՛խ» չը քաշիմ, հասրաթամահ կը մեռնիմ:
Քանի՞ տարի ախպերութեն կէնենք հըտ յիրարու, չթողիր օր մե քու
բոգի տակ պաղենք, մանցի կարոտով:

— Արի պաղե, ախպեր ջան, — կըսե գել, — քու խաթըր կը
կոտրի՛մ:

Գեվն օր ղուր դունչ կը բանձըրցու՝ դեվեն գբերան կը թալե
հմալ կը խածե ղգիլու խոտըլակ, օր ալոեք կը հասնին յիրարու,
կը դառնա՝ քանի ուժ մե կեր, գգլուխ կը տնկե վեր, գիլու ջանդակ
կը տանն ու բերե: Աղվես՝ աղն ի շալակ աղհանքից կը դառնա, կը

տեսնա օր դեմնն, զգլուխ տնկեր է, ինչօր բան մե կէրթա ու ռիկա:
Կր մոտենա օր ինչ, բան ուրիշ թուսպուր է դարձի, դլխու գընկնա,
փաթ մե էրկու դեմի բոլոր կր զվոնն, զաղ կր դնն վըր քարին, կըսն:

— Օ, բանձր է Բագո՛ս,
Զանարժա՛ն է Մարկոս,
Շուրջ գիկա Բեաթորոս,
Օռչնա՛ծ աղ, կեցի վրը քարուն,
Փախնիմ էրթամ Հըս ձորուն:

